

Վերի հատուկտորը արգարեւ նոր բան մը չաւելցնէր Յակոբ Զուղայեցիի մասին մեր զիտցածին վրայ, սակայն անտարակոյս նոր շեշտ մը կը դնէ անոր անբասիր եւ իր եկեղեցւոյն ու ժողովուրդին նուիրեալ կրօնականի հանգամանքին վրայ: Ողբալի կը դանենք երկդաւանանքի լարախաղացութիւնը որ փորձուած է ու կը փորձուի իրեն վերագրել:

Գալով իր ազգային ազատազրահան ըմբռնումներուն եւ ձգտումներուն, մենք զեռ ոչ մէկ բառ կամ տող գտած ենք իր բաղմաթիւ վաւերաթուղթերուն մէջ որոնք կրնանք իրեն վերագրել առանց սեւէ տարակոյսի: Արդէն իր դիրքին բոլոր պատասխանատուութիւնը ճանչցող լուրջ եւ զիտակից ոչ մէկ կաթողիկոս կրնար նման վտանգաւոր ձեռնարկի մը միջամուխ ըլլալ, առանց վտանգելու իր հօտին գոյութիւնը: Յակոբ Զուղայեցի շատ տուեալներ թողուցած է որոնք ցոյց կուտան որ ան քաջ գիտէր իր ժողովուրդին վիճակը: Բնական է սեւէ հայ միշտ ցանկացած է ու կը ցանկայ ազգային անկախութիւն, կեանքի, ինչքի ապահովութեան, երջանկութեան հետապնդման: Սակայն կը տարակուսիմ որ Յակոբ Զուղայեցիի պէս ուշիմ եւ կացութեան լաւ ծանօթ մէկը ցնորամտութիւնը ունենար Եւրոպական Քրիստոնէութեան վստահիլ, Հայութեան ազատութեան որեւէ կարելիութիւն եւ հաւանականութիւն տեսնելով:

Միջանկեալ զիտել տամ որ մեր եկեղեցական զիւաններուն ողբալի վիճակին մէկ շատ կատարեալ վկայականն է Յակոբ Զուղայեցիի, Հայոց Կաթողիկոսի մը, այս կարեւոր շրջաբերականին... զրչազրի մը մէջ իբր պահպանակ գործածուիլը կտրաուելէ, ծակոտուելէ եւ հաջմուելէ վերջ: Այս է մեր միջոցները պատմութիւն գրելու:

Երկար եւ ցաւոտ հարց է էջմիածնայ պարտքին խնդիրը, յաւերժական ինչպէս որ էր Երուսաղէմինը: Աւարատենչ ախրակալներէն անխղճաբար կողոպտուած եւ կապտուած, իր պարտքը յաճախ ժամանակուան կաթողիկոսներուն

ընդ կամքէն անկախ կը դիպուէր: Էջմիածնայ պարտքին յաւերժան պատճառներէն էին Ռնոփրիոսի նման անպատասխանատու եւ անսանձ եկեղեցականները, որոնց մէջ Ռնոփրիոս ինքն իսկ առիւծի բաժին մը ունեցաւ պարտքին աճման ի նպաստ: Օսմանեան շրջանին էջմիածնայ հասին ընդիմացաւ Եղեազար հակայ ծախսերու եւ խառնակութեանց գուռ բանալով: Բաղմաթիւ նուիրակներ փոխանակ էջմիածնայ հասար տեղ հասցրնելու իրենց անյատակ զրպանները լեցուցին, օգտուելով Հայ եկեղեցւոյն պառակտուած վիճակէն: Անպարկեշտութիւն է Յակոբ Գ. ին վերագրել այն հակայ էջմիածնական պարտքերը որոնք վերջապէս վինքը գաղտագողի փախուստի դիմել տուին եւ երկու տարի վերջ ալ մահացուցին, մինչ պարտատէրերը հողէստ հրեշտակներու պէս իր մահամերձի սնարին շուրջ կը գառնային: Որոշ է որ Ռնոփրիոս հոս անամօթաբար կը ստէ:

«Հինգերորդ՝ վասն ազահութեան իւրոյ գրկել կամելով զԱղթամար եւ առնուլ զպատառ նորին կերակրոյ դմբս եւս սեպհական, բազում գիւղս եւ քաղաքս վիճակաց սուրբ աթոռոյս ետ յափըտակումն նոցին, ընդ նմին եւ զերկիրն Շամախոյ եւ Շիրուանայ, զոր յաւուրց հոգեւորտիրին մինչեւ ցայսօր սուրբ աթոռոյս էր վիճակ եւ բաժին, սա վասն ախտի իւրոյ յառաջեցուցանելոյ, ետ զնոսա կաթողիկոսին Գանձասարոյ առանց կամաց մերոց:»

Այս ամբաստանութիւնը ինքնին տըղայական է եւ պարզապէս չարաբանութիւն: Աղթամարի կաթողիկոսութեան աւելորդութիւնը շատոնց զգացուած էր եւ զանազան ատեններ ալ փորցեր եղած են զայն լուծելու: Յակոբ Գ. լոկ ատկէ մղեալ ջանաց լուծել այդ աթոռը: Աղթամարի կաթողիկոսութիւնը պահեց իր անուանական գոյութիւնը, առանց դոյզըն օղուտ մը ունենալու իրեն ենթակայ թեմերուն, մինչեւ Մեծ Աղէտը: Իսկ Շամախի եւ Շիրվանի շրջանները իրապէս կը պատկանին Գանձասարի կամ Աղուանից կաթողիկոսութեան: Աղուա-